ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1950 *Общественные науки*

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՍՈՒՎՈՐՈՎԻ ՄԱՍԻՆ

Ռուս հանճարեղ զորավար Ա. Վ. Սուվորովի մոտ, ինչպես հայտնի է, զինվորական ծառայության մեջ են եղել մի շարք հայ զինվորականներ, որոնք ակտիվ մասնակցություն են ցուցաբերել մեծ զորավարի կազմակերպած ռազմական ճակատամարտերում։ Այդ զինվորականներից մի քանիսի մասին գրվել է մամուլում։ Սակայն նրանցից ոչ բոլորի անուններն են հայտնի։ Դեռևս կան Սուվորովի կամպանիաներին մասնակցող հայ զինվորականներ, որոնց մասին տեղեկություն չունենք։

Նման մի զինվորականի մասին հետաքրքիր տեղեկություններ են պահվել Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատան (Մատենադարան) Արխիվային բաժնի որոշ վավերագրերում։ Արխիվում կատարած մեր պրպտումների ընթացքում պարզվեց, որ այնտեղ կան Սուվորովի ռազմական գործունեության հետ կապված երեք վավերագրեր, որոնցից երկուսը Սուվորովի բանակում ծառայած և կապիտանության աստիճանի հասած (հետագայում բանակից զորացրված և Ղզլարում բնակություն հաստատած) կապիտան Հակոբ Աբրահամյանցի 1798 թվին գրած երկու նամակն է, որոնք ուղղել է արքեպիսկոպոս Արղությանին, իսկ երրորդը՝ Սուվորովին ուղղված մի հարցում է և տյդ հարցին Սուվորովի պատասխանը։

Առաջին երկու նամակում կապիտան Հակոբ Աբրահամյանցը Արղությանից խնդրում է՝ դիմել զորավար Սուվորովին, որը նույնպես այդ ժամանակ գտնվում էր Պետերբուրգում, և մի տեղեկանք ստանալ նրանից այն մասին, որ նա ծառայել է իր բանակում։ Այդ տեղեկանքը անհրաժեշտ է եղել կապիտան Աբրահամյանցին՝ օգտվելու զինվորական արտոնություններից և ապա քաղաքացիական մի հարմար աշխատանքի անցնելու համար։

Այս նամակներն ուշագրավ են այն տեսակետից, որ նրանք արժեքավոր տեղեկություններ են պարունակում Սուվորովի և նրա վարած մի քանի ճակատամարտերի մասին։

Կապիտան Հակոբ Աբրահամյանցի 1798 թվականի մայիսի 6-ի նամակից երևում է, որ նա ծառայել է Սուվորովի բանակում, մասնակցել է նրա կազմակերպած մի քանի ճակատամարտերին և մարտական լավ ծառայության համար արժանացել պարգևատրման։ Նա Սուվորովի հետ եղել է լեհական կռիվներում, մի քանի տեղից վիրավորվել է ճակատամարտում և բուժվել Սուվորովի կարգադրությամբ։ Աբրահամյանցը նշում է Սուվորովի ցուցաբերած հոգատար վերաբերմունքը դեպի իր զինվորները և հրամանատարները։

Վերոհիշյալ նամակի վերջում Աբրահամյանցը նկարագրում է Ղզլարի ժողովրդի ծանր վիճակը՝ «... շատ նեղության մեջ են ժողովուրդքն... մեծամեծքն

աղքատած առել ոտի տակ...» և հիշատակում է ժողովրդի ուսին դրած բեգյարի և այլ տեսակի ծանր պարտավորությունների մասին։

1798 թ. մայիսի 20-ի նամակում Աբրահամյանցը գրում է՝ թե ինչպես ինքը գնացել է Սուվորովի մոտ, Սուվորովը շատ սիրով ընդունել է նրան, թուրքերեն լեզվով խոսել է Աբրահամյանցի հետ։ Սուվորովը առաջարկել է նրան՝ միասին Պետերբուրգ դնալ։ Նրանց այս խոսակցությունը տևել է կես ժամ։ Հետագայում Սուվորովը իր հետ Պետերբուրգ է տանում Աբրահամյանցին։ Պետերբուրգից նրանք անցնում են Լեհաստան։ Նրան որոշ ժամանակ իր մոտ պահելով, հետո ուղարկում է իր գունդը, որից հետո Աբրահամյանցը ազատվում է զինվորական ծառայությունից։

Հարց է առաջանում՝ ինչո՞ւ կապիտան Աբրահամյանցը իր ժամանակին զինվորական ծառայության իր վկայականը չի վերցրել Սուվորովից։ Աբրահամյանցը, ըստ երևույթին, լավ հարաբերության մեջ չի եղել իր անմիջական հրամանատարի հետ։ Ապա լեհական և այլ կռիվների ժամանակ նա հնարավորություն չի ունեցել այդ հարցով Սուվորովին տեսնելու և զորացրվել է առանց իր մարտական ծառայությունը հաստատող վկայականի, իսկ առանց այդ վկայականի նա չի կարողացել օգտվել զինվորական ծառայության համար իրեն շնորհած արտոնություններից։ Եվ այդ թերացումն ուղղելու համար է, որ դիմում է Արղությանին՝ խնդրելով Սուվորովից վերցնել իր վկայականը։ Այդ առթիվ նա գրում է.

«... Ամենայն տեղ ուր և նա եղած է և ընդ նորա ես գթնւել եմ, բայց Բսլինովիցն չկարողացա վկայական թուղթ առնուլ, պատճառ որ Վարշաւ մտինք նա ևս նույն դիշերն գնաց Պետերբուրգ... ոչ կարողացա գրաֆից առնում թուղթ...»։[1]

Ինչպես երևում է, Աբրահամյանցը ծանոթ է եղել Սուվորովի և Արղությանի լավ հարաբերությունների մասին։ Հայտնի է, որ 1778 թ. կազմակերպած Ղրիմի հայ և հույն ժողովուրդների գաղթի ղեկավարը մեծ զորավար Սուվորովն էր, իսկ նրան այդ գործում մեծ օգնություն են ցուցաբերել Հ. Լազբևը և Արղությանը, որից հետո նրանք մնացին ընդմիշտ լավ բարեկամներ։

Ուշագրավ է նմանապես երրորդ վավերագիրը, որը ինչ որ մի հին գործից պոկած, կոշտ թղթի վրա, գրագետ ձեռքով գրված մի թղթիկ է, որի վրա ռուսերեն լեզվով գրված է օտարերկրյա մի գեներալի հարցը՝ բախտի բերմունքի մասին և հանճարեղ զորավարի տված պատասխանը։ Օտարերկրյա ռազմական գործիչը Սուվորովի բոլոր հաղթանակները, ինչպես երևում է հարցումի բովանդակությունից, ցանկացել է վերագրել բախտին, սակայն մեծ զորավարը լավ է իմացել պատահականության դերի մասին և իր պատասխանով ապացուցել է, որ պատահականությունը կյանքում, իհարկե, որոշ դեր խաղում է, սակայն, եթե զորավարը չունի խելք և ժամանակի ոգին չի ըմբռնում, ժամանակի պատվերը ճշտությամբ չի կատարում խելացիորեն, այդտեղ ի՞նչ կարող է անել բախտը։

Հետաքրքիր է թե ինչ ճանապարհով է եկել վերջին վավերագիրը Հայկական ՍՍՌ Մատենադարանի Արխիվային բաժին։ Այդ մասին որոշակի ոչինչ ասել չենք կարող։ Մի բան անկասկած է, որ ռուս մեծ զորավար Սուվորովը

[1] Հայկական ՍՍՌ Մատենադարան. Արխիվային բաժին, կաթ. դիվանի ֆոնդ, թղթ. 8, վավ. 43։

սիրվել է և մեծարվել ի թիվս այլ ժողովուրդների, նաև հայ ժողովրդի կողմից որպես իր բարեկամի և հանճարեղ զորավարի և նրա անձնավորության հետ կապված շատ ասույթներ լայն ժողովրդականություն են վայելել նաև հայ իրականության մեջ։ Այդ է պատճառը, որ նրա մասին եղած այս արտահայտությունները արտատպվել, տարածվել և ձեռքից-ձեռք անցնելով եկել հասել է մեզ։

Անհրաժեշտ ենք համարում երեք վավերագրերը հանձնել տպագրության։

Ա. ԱԴԱՄՅԱՆ

1

Արժանավայել կայսրապսակ Քոյին բարձր սրբազնութեանդ։
Ողորմած տեր իմ և բարերար[1]

Յառաջ քանզի այս գրոյս երրորդ դիր եմ յղել ի սպաս Սրբութեանդ և պատասխանին ոչ արժան եղեալ ընկալնուլ ծառայդ քո։ Այժմ ես գրեցից առ Սրբութիւնդ, երևի ինձ նշան յատուկ զօրհնութիւնդ հատեալ ես ի վերայ զիս, բայց այսօր լայ՝ թէ Սրբութիւնդ Տէր Սահակին անցեալ փոշտին դրած ես թէ Յակոբ եղբորդ ծանոյ որ գրաֆ Սուորովն տեղս է, զոր ինչ խընդիրք ունի, շուտով խնդիրք ընդ փոշտիւ յղեսցէ անուամբ կայսերի։ Ուստի դթանայցիմ այնպիսի գրագիր վարժ, որ կարողանայցէ ըստ պատշահին բան գրել, որ ահա լայ ի այլոցէ, ոչ թէ տէր Սահակից, մինչի կէս աւուրս փոշտն ելանելու էր։

Եւ եթէ տէր յաջողեսցի քոյին սուրբ և մաքուր աղօթիւքն, այս յառաջներիս փոշտին պատրաստ կացնիմ, զոր ինչ որ արժանոյն լինի և ոչ, Սրբութեանդ այսքան է խնդիրքս, որ ի շնորհաց քոյոց անտես մի՛ առներ զիս, եթէ մին մարդոյ անյաջողութիւն/հանդիպի, մինսմինու վերեն կուքայ, որպէս ծառայդ այս տեղ. խնդրեմ երես անկեալ՝ զոր ինչ խնդրեսցուք Սրբութենէդ մի՛ անտես առնոյր զմեզ։

Քանզի յոյժ ցանկայի տեսութիւն Պայծառափայլ իշխան գրաֆ Ալեքսանդր Վասիլիչ Սուորովին, և գայ այնքան հայրական զողորմութիւն և բարերար այ եղած զիս, որ իմ ծնող հայրս ոչ է եղած ինձ. մին տեսնէի, աչօք, համբուրէի ձեռքն, զօրհնութիւնն ընկալնուի, այս ժամանակն ոչի՛նչ պիտոյ չէր ինձ աւելի, քան զայդ։

Ո՞վ իմ տէր, խնդրեմ Սրբութենէդ և երեսանկեալ աղերսեմ և իսնարհաբար գարշապարդ համբիւրս մատուցանեմ լինի թէ ի հանդիպումն ժամանակին յիշեսցէ ծառայիդ յառաջ նորա՝ ըստ աննուամբ Ապրամով կեպիտանն, և յետ յիշելոյն կարելի լինի որ մին հնարիւք ինձ համար մին վկայական թուղթ առնոյք, զոր ինչ ծառայութիւնս տեսեալ է իւր մօտ, կա՛մ լեհի պատերազմին, որ թրատել են և թանկով վիրաւորել են ինձ. յառաջին նաակին եղած իմ Կովիլկայ, երկրորդն Կօբրին, որ առաւօտեան արշալուսին վրա տուինք ենեալ Եսայովի հետ, որ էր սեպտեմբերի 3-ին։ Երրորդն՝ Կրուպչից մօնաստիր, որ էր ամսոյս 6-երրորդ աւուրն, որ այն օրն չորս տեղ թրով կտրատեցին թշնամիքն՝ յառաջին գլուխս, երկրորդն՝ ձախ կողմի ունքս, երրորդ՝ ձախ ձեռիս մատն, չորրորդն՝ յաջի ուսագլուխս. որ երեք ամիս բարկաց մնացի, պատճառ, որ ամսիս 8-ին ես եղե պատերազմ ի Պրեստ և Տիեշպոլ։ Եվս գնացի անդ, նարէքս շուտ էկին, որպէս ինքն հրամայաց դոքտուրին, լաւացրուց զիս Պրեստ մեստեչկումն։

Եւ այնուհետ Կօբիլկու վերեն գնաջինք պատերազմն, որ էր հոկտեմբերի 15-երորդ աւուրն։ Եւ անտի՝ Ռրակի պարիսպի վերեն ամսոյս 24-երորդ աւուրն, գիշերվա 11-երորդ ժամուն, ուշտուրմա ընդ ենեալ Իսլենովի հետն. ամենայն տեղ ուր և նա եղած է և ընդ նորա ես գթնեալ եմ։ Բայց Իսլինովիցն չի կարողացայ վկայական թուղթ առնուլ, պատճառ որ Վարշաւ մտինք՝ նայ ես նոյն գիշերն գնաց Պետերբուրգ, և անդ մնաց. ոչ կարողաց համարձակել էիմ այն ժամանակին, որ գրաֆից առնում թուղթ մինչի այսօր մնացեալ եմ անբան և գործ։ Այժմս խնդրեմ՝ կարելի այ, որ շնորհի մեզ մին թուղթ այս ժամանակին. որ ով ոք զօրապետք չեն դալիս տեղս՝ հարցնում վկայականի թուղթ պայծառափայլիցդ, որ եթէ ծառայած ես նորա, առանց վկայականի թուղթ չես լինի աստ։

Բայց Ղուտովիչի պրիստալենն մեզ համար սուտ եղև մինչի այս, մեզ խաբեալ է, ոչ կոլեկին ծանուցեալ է, և այժմ յատուկ իմացաք նորա խաբեութիւնն մեզ։ Նմանապէս մեր ենեալ Իսլինովն եկն աստ, խոստացաւ մեզ յատուկ թուղթով կամ գրով յայտնել զինուորական կոչէկն։ Եւ մերոյս քամպադրին և նորա էլ փոխեցին ի տեղէ իւր, բայց այս նոր եկածն գալու է աստ քանի օրս և սպասում ենք որ յաւուր. ոչ գիտեմ ե՞րբ մտանիլն աստ։ Եւ ինքս էլ տկարութիւն կրեցի յոյժ, քոյին մաքուր և սուրբ աղօթիւք զերծայ այնմ մահէ։

---

[1] Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատուն (Մատենադարան), Արխիվային բաժին, կաթուղիկոսական դիվանի ֆոնդ. թղթ. № 8 վավ. № 43։

Եթե տեղոյս որպիսութիւնը հարցնես, շատ նեղութեան մեջ են ժողովուրդքն քո, բայց միմայն շունչիրնայ մնացել ողորմելի մարդկանց. մին կողմից հիւանդութիւնն, մին կողմից փոստովն, մին կողմից բեկարն, այսպիս տանջանայ միջի են։ Կամք տեառնդ է. լինի թէ սրբութիւնդ մին օգնական լինես յաւուրք այս բաղաքիս ժողովրդոցդ. Աստուած վերջն բարի առնե սոցա։ Մնծամեծքն աղքատած առել ուտի տակ, Տէր փրկի, ոչինչ խնամք ոչ գոյ սոցա սրտի մեջն։

Լինի թէ տեղիցդ մին ողորմութեան անբաւել թուրք վրացի ոչ գայ աննաւմբ, ապա ողջ հայ ու վայ. սրբութեանդ հայտնի է տեղիս որպիսութիւնն, այլ ի՞նչ գրեմ։

Ուրայելին այս ամսոյս հանապարհելոց եմ իւր ծնողն իւր, ամենայն խարջովս իմ։ Միամտութեամբ մեր տանիցն սուրբ աչդ համբիւրս մատուցանել մայրս իմ։

Մնամ քոյին բարձր սրբազանութեանդ պատրաստ հնազանդ ծառայ ամենայն ժամ նաստ անարժան Յակոբ Ապրհամեանց։

Մայիսի 6-ին
1798
ի Ղզլար

2

Արժանավայել կայսերական քոյին բարձր Սրբազնութեանդ.[1]
Ողորմած տէր է իմ իսկ խնամածու բարերար.

Ապրիլի 22-երրորդ աւուրմէն շնորհեալ զօրհնութեանդ թուղթդ ընկալայ խոնարհութիամբ ամսոյս 16-րդ աւուրքն ձեռամբ տէր Սահակի, կարդացի և իմացայ Քոյին հայրական խնամս, որ ունիս ի վերայ նաստ ծառայիդ կամ որպէս յառաջագոյն ունէիր շնորհդ և խնամս ի վերայ իմ։ Եւ ես՝ ծառայդ քո, որ կամ աստ դեգերեալ և տատանեալ, օր աւուր նեղեմ և մաշիմ կենաք վասն իմ ծովացեալ մեղացն, շնորհակալութիւնս ունիմ մեծապես ի տիառնեդ. եւ գոհունակ են ի յերկրից մինչք ցյերկինս և խոնարհաբար համբիւրս ունիմ սուրբ գարշապանիդ սրբութեանդ տիւ և գիշեր յամենայն ժամ։

Յաղագս խոսակցութեան ընդ Պայծառափայլ Գրաֆ Սօվորոին՝ վասն ծառայիդ քո, յոյժ ուրախացայ, վասն միտ բերելուոցն անարժանիս, բայց հրամայել էր՝ թէ ժամանակ մի անցրուր, եթէ կամիս մտանել ի ծառայութեան—ուր նմն իւր բանն ոչ յայտնի՝ թէ զինչ է լինելոց. շատ բարւոք է հրամայում, բայց որո՞վ համարձակիմ խնդրել տեղւոյս եղած կողմնակալաց, պատճառ ոչ ունիմ ընդ իս վկայական վասն ծառայութեան իմոյ Գրաֆէդ, եթէ ունենայի, յատուկ մին վկայական թուղթ, ես ոչ ումեքէ ոչ խնդրէի, միմիայն նորին բարձր կայսերութիւնից. գիտեմ ողորմած այ, ամենայն ճշմարիտ և հաւատարիմ ծառայից. բայց որ ես ունենայի վկայական թուղթ, քաջասիրտապես խնդրելուց էի կայսերից մեր, որովհետև թուղթ չունիմ, նմանապես սիրտ չունիմ և զօրութիւն խնդրելոյ։

Յաղագս հողոյն իմոյ, որ հրամայել էինք՝ թէ հրաման է կայսրէն՝ ով ոք որ գետին ունի, մինչի վեցերորդ տարին գիւղ չէ ձգէ, իլելոց են եւ որքան էլ ըշտրաֆեն առնելոց, բայց սրբութիւնդ գիտես, մինչի այսօրս ոչ մի ձեռացս գետեն այ եղած, ոչ գեղ չինէի, պաճառ, որ, երբ այն գետինն վեր առիր վասն իմ ես մին օր նորա տեսայ ոչ. հողէ և քար։ Ապա այլոցէն լսում էի՝ թէ հող ունես 1500 գեսեաթին և քանիցս խնդրեցի սրբութենէդ՝ թէ տուր ինձ նորա պլանն և ուքազի կօրիէն, ոչ տիր։ Եւ ի 96 թուին փետրվարի 13-երրորդ յաւուրն, սրբութեանդ գրով ծանուցի Պետերբուրգից թէ՝ ինձ հարիւր թուման տուղ գոյ իմ գետնին, սրբութիւնդ ոչ պատասխանեցիր ծառայիդ։ Երկրորդն եկի ընդ գրաֆին Դուպասար և անդի ես եկի Գրիգորուպոլ և անդի ես ծանուցի գրով տիրացու Պետրոսան՝ թէ ինչ ես կամենում այն գետինի բանն ունենաս շնորհ պատասխանիս ինձ համառօտ։ Եվս ոչինչ պատասխան ոչ ընկալայ, մնաց այնպես մինչի իմ գալն Ղզլար։ Եւ տեառնդ շնորհ արիր ի Թիֆլիզու Ղզլար, բայց աստ ես ոչ համարձակեցա ընդ սրբութեանդ խոսել, պատճառ որ, տրտում էիր վասն ազգին հայոց անչափ նեղութեանց մեջից դուրս ելած։ Եւ ես ո՞րպէս համարձակէի առաւել նեղութիւն տալ սրբութեանդ կարելի այ մտածելտ լինի մին երեկոյի Ղզլար ի վերայ սեղանոյն խոսակցութիւն եղև վասն գիտնին և հողոյն։ Մայեոռ Մկրտիչն ասեր թէ ոչ սրբազան Յակոբի հողն չում չես կտրական անում, սրբութիւնդ խոշտութիւն անցուցար և հրամայեցիր թէ՝ Յակոբն էլ իմնէ և գիտեն էլ։ Իրաւի,

[1] Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատուն (Մատենադարան), Արխիվային բաժին, կաթ. դիվանի ֆոնդ թ. № 8, վավ. № 33։

հրամայեցիր, ես ծառայդ կարող եմ դետին ճարել ուրևիցէ, բայց սրբութեանդ պես բարերար ոչ եմ կարող դրթանալ և ունենալ, որովհետեւ սրբութեանդ հաջոյ եղաւ ժառանգել եղբոր որդին քո նոյնպես եղիցի ըստ հրամանաւ քո. գիտեմ որ սրբութիւնդ ինձ վնաս չես կամենայ և շնորհ կունենաս ինձ վերէն և հաւուցանող։ Բայց գնացի զեմցկի սուդ, գրել տայի վերուսչի գիրն և յուղեորէի սրբութեանդ. թուղթ ոչ դոյ աստ դատաստանայտանն, և մնաց միուս փոշտին յղելոց եմ, պիտի թուղթ գայ ի Հաշտարխանու դուպերնեցկից թագաւորական կնքով կնքեալ, այնպես հղե հրամանն աստ և ամենայն տեղ Ռուսաստան՝ թէ վերսիլ, թէ յենկերագիր, թէ վաճառականութեան, թէ բաժանութեան, թէ հոգեւոր, և թէ մարմնաւոր։

Յաղագս վասն իմ դրեալ էիր՝ թէ կամիս ծառայես Գրեմ Գրաֆ Մարկովին, որ քեզ վերառնոյ ծառայութիւն։ Ո՞վ իմ տէր գիտես այսմ ժամանակին ո՞րպիսի դժուարին է ծառայութիւնն, եթէ տէր միարասցէ, մի փոքր սղալութիւն եղն՝ հոգով և մրամնով կորայ։ Մի՞թէ ես յոժար չեմ ծառայել իմ ողորմածագունեղ կայսրն. որ վկայական գիր ոչ ունիմ իմ գրաֆիցն, ոչինչ եմ ի մէջ ազնիւ ծառայողաց. եթէ ունենամ թուղթ, որպէս գրած եմ սրբութեանդ ասացեալ փոշտին, նշան տեղ պատերազմէ մէջն՝ թէ թուրի ե կամ թանքի եարաներս և իմ անսխալ ծառայութիւնս իւր մօտէն և կամ ուր և հրամայել է գնամ և դնացեալ եմ, ոչ քուն, ոչ հաց՝ ոչ թշնամի, ոչ թուր և ոչ սուր չեմ հարցրել, գնացել եմ բանին կատարում եմ տված, եկած եմ իւր մօտ և քանիցս ճակատիս համբիւրել այ ինքն ի մէջ մեծամեծ մեջն։ Վասն աստծոյ և վասն իւր կենդանի հոգոյն, ինձ ողորմութիւն անի, որ մնացել եմ անճար և անտէր, պատճառ ինչ որ չունիմ վկայական թուղթ դորանէ, ես խոսելու երես չունիմ տեղս, ումէքե՞ խոսիմ և խնդամ։

Եւ այժմ ինչ պատահեց ծառայիդ, նոր յանցեալ փոշտէն Եկտրենէզրատի կամիսիցրն գիր ա գալի տեղուոյս կրմենդատին՝ թէ բոտմիստր Եակոբ Ապրհամեչիցն վեց թուման և երկու բուբլի փող առնոյս յուղեւորես կամիսիեն Կտերինեզրադ։ Պատճառ ի՞նչ է։ Պատճառ այս է, որ ի թուին 95 և նոյեմբերի 15-երրորդ աւուրն, Վարշաւ քաղաքումն ինձ տեղաւորում են Եպիսկոպեթզրբաթցկի կոնի պոլկումն կամպլեղդ. ես յոյժ շնորհակալեցայ գրաֆէն, որով շնորհակալեցայ, որ ինքն սիրում էր, իւր մօտի մարդիքն չէին սիրում հայ մնալ մօտն գրաֆի, վասն այսմ պատճառի, ուրեմն կայր ձայն գրաֆի համար, գնալ Պետերբուրգ եղն վերոյյիշեալ ամսոյ 17-երրորդ աւուրն երեկոյ, որ օրն ուրբաթ, երեկոյ ժամուն, որպէս սովորութիւն էր մեր, զօրի գնալ միշտ ի դուռն գրաֆի։ Գնացաք բանի անցինք, կանգնեցաք անդ, մինչի ելանելն ի սենակէն գրաֆն դուրս էլաւ, ողջին գլուխ վեր բերեց և անդի, վաղվաղելով, առ ինձ և խոսեցաւ թէ՝ «Աբրաամով, ես գնում եմ Պետերբուրգ և քեզ ընդ իս առիս, ուրախ լեր։ Տաճկի լեզվաւ մինչի կէս ժամ խոսեաց ընդ իս։ Եւ այլք մեծամեծք, որ կան ի դրունս Գրաֆին, հիացած զարմացին. ոք սայ ով իցէ, որ այսքան ժամանակ խոսկցի։ Եւ գրաֆն ետ դարձաւ ի սենակս իւր։ Եկին ոմանք հարցրին՝ թէ ի՞նչ էր պատճառ, այսքան երկար խոսել ընդ քեզ։ Եւ ոչ յատնիցի՝ թէ ի՞նչ լինէլն։ Բայց հետո քանի բոբէից փոքրաւոր Գրաֆի ելաւ դուրս ձայնեց զիս՝ «Արի գրաֆն շուտ։ Գնացի մօտն, պատերեաց զոր ինչ ուներ ի սրտի։ Եւ ես յետոյ խնդրեցի՝ թէ ո՞վ ողորմած տէր իմ, ինչ որ արժանի համարեցիր ընդ քեզ տանել, և հրամայիր իմ բոլկն իմացում տան դեժուրստեան։ Եւ նոյն բոբէին կանչեց դեժուրնի ենարալին, հրամայեց շուտ բոլկն մացում տուր որ բոտմիստր Աբրաամովն ընդ մեզ առեալ տանեմ վասն հարկաւորութեան։ Ելաք գնացինք Պետերբուրգ։ Եւ անդ ողորմութիւն եղե, որ ով որ կան մօտն Գրաֆին, ոսկն խաչ դուրս տան գանձարանից վասն ուշտուրմային Պրակու։ Ով որ եղած են, ողջին դուրս եկն և ինձ ոչ, պատճառ՝ մոտի մարդիքն Արսենով ենեարալն և Մանդրակինն, որ մինչև իւրն գրաֆին գրով խնդրեցի։ Եւ հրամայեց թէ՝ գնամք այսօր հացի տուրեց, անդե ետ կամ և քեզ տաց խաչ։ Եւ մինչի այսուր ընկալնուեմ նոցանե խաչ։ Մի՞թէ գրաֆ չէր կամում տալ, բայց Մանդրակինն չէր կամում տալ մեզ մեր ծառայութեան վարձն. ո՞վ էր ըշտուրմումն, և ով որ ընկալան խաչ։

Եւ ի Պետերբուրգու ելանք եկինք ի կոզմունսն Լեհաց, որ է մեստեչկա Տուլչին։ Եւ անդ ես խնդրեցի գրով վասն խաչին։ Նախանձեցան Արսենովն և Մանդրակինն Տեչչենկին։ «Որո՞վ դու համարձակես խաչ խնդրելու առանց մեզի։ Այս նախանձն պահեցին մինչի որ գրաֆն դնաց բոլկերն տեսանելու և ինձ թողեց Տուլչին՝ «Մնայ՝ մինչի հս եկից աստ։ Բայց գալուստն գրաֆի այն դիժուրնի ենեարալն, որ էր Արսենովն, մաշեց զիս հոգիս և մարմինս, պատճառ որ չէր ուղում իմ մնալ գրաֆի մօտն. որպէս իւրն յատնի է և դիտել նոցա արարմունքն։ Եկն Տուլչին գրաֆն, գնացի և տեսի։ Որպես նայեց երեսիս, հարցուց՝ «Հիա՞նդ ես եղած։ Ասեցի հրամել ես, չդանկատեցի՝ թէ չիլինի որ ես նախանձ ընկնեն ընդիս, թող արի մնաց։ Մայիսի մինին դուրս տուին տօնլուղս, կիսեցին Լնպէս, համարի թէ այս պաթենթիդ վարձն այ, որ վեր

առինք, էտուրն էլ դարով եղանք, լինի թէ սիրով վարվեն ընդիս։ Եւ յետայնու այս մօկանեսին թէ՝ պիտես գնալ քինեազ Վօլխոնցկի մօտն շուտ։ Յուլիսի 9-ումն 96 թուին եկի Վօլխոնսկի մօտն, պահից զիս մենչի հոկտեմբերի 24-րն և իւրեան պտարօժնով այս տեղ որ գնամ պերսիեայ Զուրովին և անդի դառնայցեմ իւրն անրավով. որ ես եկել եմ այս կողմումսն յուլիսի 20-ումն, վճերել են ինչ պօլկից։ Եկի ես, իմ աթեստատս շանց տուի տօնլուղի համար գրաֆ Ղուդովիչին։ Եւ հրմայեց, որ կամ Եկատերինիդրատ կամիսից տօնլուղս դուրս տան։ Ինչ ինձ հասանելու է, օրէնօք եկի ըստացեայ 25 թուման բռ (2000) դիար, բայց այժմ ուզում են էն տօնլուղն ետ պարտեմ հատուցանել։ Այս քանի օրս մեր արած ղուլուղն ողջ փուչի դուրս եկաւ։ Անօղն այս բաներիս ողջ Մանդրակինն և Տեշչենկին ինձ ճանապարհ քցում և բօլկ գրում ան՝ վիկլուճիթ արեք Ապրամօվին, ոչ գրաֆնայ իմանում, ոչ ես, միամիդ կանք։ Ապա իմ խնդիրքս այս է սրբութիւնեդ, եթէ պատահի այս իմ նեղութիւնս յայտնես ինչ ցաւեր եմ քաշում ես ծառայդ։

Վասն վերուսչի թուղթէն միամիտ լեր, միուս փոշտին յղելոց եմ, որպէս որ լինի։ Մայրս սուրբ աչուցդ համբիւրս մատուցանէ։ Յաղագս վկայական թուղթն իմ որպէս որիցէ ծառայեմ սրբութեանդ անտես չառնոյս գրաֆ Սուորովից, մի միայն յուսացել եմ տորա Պայծառութեանդ, կամ թէ այն իքմինս փուչ անում Վարշաւ քաղաքումն հրաման տային, գնայի անդ իմ իքմինին տիրանայի, եթէ լիներ ճար ողորմութիւն աներ զմեզ. մին պաշպորտ առնէի այդպէզ ռեզորտկին քնեաղէն։

Յաղագս կուսանաց եկեղեցւոյն ոչ ինչ ճար ոչ եղև. ջուղար արեց, ողջին, ով գնացին խնդրելու մերոնցիցն, եթէ այս մարթն իւր բօլկօվն դուրս ոչ գոյ, ոչ լինի սմա հանգստութիւն քաղաքիս։ Կամքն քո է, զոր ինչ կամիս հասկանալ։ Այս ղտոր գրիցս, նիւթ առ՝ թէ ինչ պատճառն։

Ողորմած տէր իմ

Մայիսի 20-երրորդ օրն
1798 թուոյ
Ի Ղղլար

Միշտ մնամ քոյին բարձր սրբազնութեանդ պատրաստ և հնազանդ նաստ ծառայ Յակոբ Աբրհամեան։
ծառայ սրբութեանդ, ես ամսոյս միջին, որ է լուսինի 15-երրորդ երեկոյին, խաւարեցաւ լուսինն ի ժամ 8-ից մինչի 10 լրացաւ և բացուաւ։

3

Одинъ Генералъ иностранной службы, будучи за столомъ у Генералисимуса Князя Италіинского Графа Суворова Рымникского, вздумалъ разсуждать о щастіи и доказывать что оно неразлучно съ великими деяніями; Безсмертный Полководецъ, проникнувъ неопитнаго критика своего, Перервалъ сужденіе. его следующимъ возклицаніемъ.

Денъ щастіе, Неделя щастіе, Месяцъ щастіе, Годъ щастіе,
Целой въек щастіе, воля твоя бритееецъ надо немножко и ума.[1]

А. Адамян

Новые документы о Суворове

Резюме

Как известно, в армии гениального русского полководца Суворова служил целый ряд армян-военнослужащих, активно участвовавших в боях, организованных Суворовым. О некоторых из них мы имеем печатные сведения, имена же других нам еще неизвестны.

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետ. Ձեռագրատուն (Մատենադարան), Արխիվային բաժին, կաթ. դիվանի ֆոնդ, թղթապանակ № 248, վավերագիր № 1212։ Վավերագրի վրա թվական չի նշված։ Հավանաբար գրված է 19-րդ դարի սկզբներին։

При обследовании мною архивного отдела Гос. Хранилища древних рукописей (Матенадаран) при Совете Министров Армянской ССР выяснилось, что в архиве хранятся три документа, которые связаны с военной деятельностью Суворова.

Авторы двух из этих документов (в печати об этом неизвестно). Один из них, Акоп Абрамянц, в двух письмах, написанных в 1798 году, обращается к архимандриту Аргутяну, находившемуся тогда в Петербурге. Автор писем просит Аргутяна, чтобы тот ходатайствовал перед Суворовым о выдаче ему справки о службе в армии Суворова. Письма эти содержат интересные и ценные данные о Суворове и его военной деятельности и кампаниях, в которых лично участвовал сам Акоп Абрамянц, впоследствии раненный и демобилизовавшийся.

Автором третьего документа является неизвестный иностранный генерал. В обращении к Суворову, автор приписывает победы Суворова судьбе. Суворов возвращает это письмо и дает на него правильный лаконический ответ.

Считаем необходимым опубликовать вышеуказанные документы.